



Առողջապահության ոլորտի մասնագետներին ուղղված հաղորդագրություն

Համակարգային ազդեցությամբ և շնչառման ֆտորքվինոլոններ* և արտայի անևրիզվի և շերտազատման ռիսկ

Առողջապահության ոլորտի հարգելի մասնագետներ,

Բայեր ԱԳ ընկերությունը՝ Դեղերի եվրոպական գործակալության և ակադեմիկոս Է. Գաբրիելյանի անվան Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոնի հետ համաձայնեցված, ներկայացնում է արտայի անևրիզվի և շերտազատման՝ համակարգային ազդեցությամբ և շնչառման ֆտորքվինոլոնների կիրառմամբ պայմանավորված ռիսկի վերաբերյալ նոր նախազգուշացման լրացումը:

Ամփոփագիր

- Համակարգային ազդեցությամբ և շնչառման ֆտորքվինոլոնները կարող են մեծացնել արտայի անևրիզվի և շերտազատման ռիսկը, հատկապես՝ տարեցների շրջանում:
- Պացիենտի մոտ արտայի անևրիզվի և շերտազատման ռիսկի առկայության դեպքում ֆտորքվինոլոնները պետք է կիրառել միայն օգուտ-ռիսկ հարաբերակցության մանրակրկիտ գնահատումից և բուժման այլընտրանքային տարբերակների դիտարկումից հետո:
- Արտայի անևրիզվի և շերտազատման նախադրյալ հանդիսացող վիճակները ներառում են անամնեզում անևրիզվի առկայությունը, արտայի՝ նախապես առկա անևրիզվը և շերտազատումը, Մարֆանի համախտանիշը, Էլերս-Դանլոսի համախտանիշի անոթային տեսակը, Տակայասուի արթերիիտը, հսկա բջիջների արթերիիտը, Բեհչետի հիվանդությունը, զարկերակային գերճնշումը և աթերոսկլերոզը:
- Պացիենտներին պետք է տեղեկացնել արտայի անևրիզվի և շերտազատման ռիսկի մասին, ինչպես նաև՝ հորդորել դիմել անհետաձգելի բուժօգնության՝ որովայնի, կրծքավանդակի և մեջքի հատվածում հանկարծակի սուր ցավեր զգալու դեպքում:

*ՀՀ տարածքում գրանցված են հետևյալ ֆտորքվինոլոնները. Ավելոքս (մոքսիֆլոքսացին) 400 մգ թաղանթապատ դեղահատեր, Ավելոքս 1,6 մգ/մլ լուծույթ կաթիլաներարկման և Ցիպրոբայ (ցիպրոֆլոքսացին) 500մգ թաղանթապատ դեղահատեր:



Անվտանգության վերաբերյալ ընդհանուր տեղեկություններ

Ֆտորքվինոլոնները Հայաստանի Հանրապետության տարածքում բժշկական կիրառման թույլատրված հակաբիոտիկներ են և նախատեսված են մի շարք մանրէային, այդ թվում՝ կյանքին սպառնացող վարակների բուժման համար:

Համաճարակաբանական և ոչ կլինիկական հետազոտությունների տվյալները վկայում են ֆտորքվինոլոնների կիրառումից հետո աորտայի անևրիզմի և շերտազատման ռիսկի բարձրացման մասին:

Համաճարակաբանական ուսումնասիրությունների [1-3] արդյունքում պարզվել է, որ աորտայի անևրիզմի և շերտազատման ռիսկը 2 անգամ բարձր է համակարգային ազդեցությամբ ֆտորքվինոլոնների երկարատև ընդունման դեպքում, ինչպես նաև՝ բարձր ռիսկի խմբում գտնվող տարեցների շրջանում՝ այլ հակաբիոտիկներ (ամօքսիցիլին) ընդունող կամ հակաբիոտիկ չընդունող պացիենտների համեմատ:

Մկների վրա իրականացված ոչ կլինիկական փորձարկումները [4] ցույց են տվել, որ ցիպրոֆլօքսացինը բարձրացնում է աորտայի շերտազատման և քայքայման նկատմամբ հակվածությունը: Նշված տվյալը ամենայն հավանականությամբ վկայում է ֆտորքվինոլոնների խմբին բնորոշ՝ ջլերի հյուսվածքները վնասող և, հետևաբար, ջլերի ախտահարման ռիսկը բարձրացնող ազդեցության մասին:

Աորտայի անևրիզմը և շերտազատումը հազվադեպ հանդիպող կողմնակի ազդեցություններ են և տարեկան ի հայտ են գալիս 10000 պացիենտից 3-30-ի մոտ: Ռիսկի բարձրացման գործոնները ներառում են ընտանեկան պատմության մեջ անևրիզմի առկայությունը, աորտայի՝ նախապես առկա անևրիզմը և շերտազատումը, Մարֆանի համախտանիշը, Էլերս-Դանլոսի համախտանիշի անոթային տեսակը, Տակայասուկի արթերիիտը, հսկա բջիջների արթերիիտը, Բեհչետի հիվանդությունը, զարկերակային գերճնշումը և արթերոսկլերոզը:

Այսպիսով, աորտայի անևրիզմի և շերտազատման ռիսկ ունեցող պացիենտների շրջանում համակարգային ազդեցությամբ և շնչառման ֆտորքվինոլոնները պետք է կիրառել միայն օգուտ-ռիսկ հարաբերակցության մանրակրկիտ գնահատումից և բուժման այլընտրանքային տարբերակների դիտարկումից հետո:

Պացիենտներին անհրաժեշտ է տեղեկացնել աորտայի անևրիզմի և շերտազատման ռիսկի մասին, ինչպես նաև՝ հորդորել դիմել անհետաձգելի բուժօգնությանը՝ որովայնի, կրծքավանդակի և մեջքի հատվածում հանկարծակի սուր ցավեր զգալու դեպքում:

Կողմնակի ազդեցությունների հաղորդման կոչ

Հետզրանցումային փուլում կասկածելի կողմնակի ազդեցությունների վերաբերյալ հաղորդումները կարևոր նշանակություն ունեն: Առողջապահության ոլորտի մասնագետները ցանկացած կողմնակի ազդեցության մասին պետք է հաղորդեն Հայաստանի Հանրապետության ազգային կենտրոնին:



Ընկերության կոնտակտային տվյալներ

Լրացուցիչ տեղեկությունների համար, խնդրում ենք դիմել «Բայեր» բաժնետիրական ընկերությանը. Հասցե՝ Ռուսաստանի Դաշնություն, 107113, ք.Մոսկվա, Ռիբինսկայա 3-րդ փողոց, տուն 18, շինություն 2, հեռախոսահամար՝ +7 (495) 234-20-00:

Հղումներ

*ՀՀ տարածքում գրանցված են հետևյալ ֆտորքվինոլոնները. Ավելոքս (մոքսիֆլոքսացին) 400 մգ թաղանթապատ դեղահատեր, Ավելոքս 1,6 մգ/մլ լուծույթ կաթիլաներարկման և Ցիպրոբայ (ցիպրոֆլոքսացին) 500մգ թաղանթապատ դեղահատեր:

[1] Daneman N, Lu H, Redelmeier DA. Fluoroquinolones and collagen associated severe adverse events: a longitudinal cohort study. *BMJ Open*. 2015 Nov 18; 5(11):e010077

[2] Lee CC, Lee MT, Chen YS, Lee SH, Chen YS, Chen SC, Chang SC. Risk of Aortic Dissection and Aortic Aneurysm in Patients Taking Oral Fluoroquinolone. *JAMA Intern Med*. 2015 Nov;175(11):1839-47.

[3] Pasternak B, Inghammar M and Svanström H. Fluoroquinolone use and risk of aortic aneurysm and dissection: nationwide cohort study. *BMJ* 2018; 360: k678.

[4] LeMaire SA, Zhang L, Luo W, Ren P, Azares AR, Wang Y, Zhang C, Coselli JS, Shen YH. Effect of Ciprofloxacin on Susceptibility to Aortic Dissection and Rupture in Mice. *JAMA Surg*. 2018 Jul 25:e181804. [Epub ahead of print]